ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **07.07.2022թ.**

Հիմք ընդունելով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2022 թվականի մայիսի 26-ի N 06-Լ որոշման 6-րդ կետը, որոշվել է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու հարցը հավանության արժանացնել արտահերթ նիստով՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2022 թվականի հուլիսի 4-ին ժամը 14:00 և ավարտվել 2022 թվականի հուլիսի 7-ին ժամը 14:00:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն (ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի մայիսի 20-ի N 505-Լ հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի նախագիծ):

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Խոջոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ա. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Հովհաննիսյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ժ. Մայիլյան - «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Չեն մասնակցել՝

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
3) Ա. Ասոյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
5) Ա. Սարգսյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
6) Վ. Հովհաննիսյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
7) Ժ. Մայիլյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,
8) Շ. Դանիելյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի հարցին **8 կողմ, 0 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն (ՀՀ առողջապահական և աշխատանքի

տեսչական մարմնի ղեկավարի «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի մայիսի 20-ի N 505-Լ հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանի նախագիծ):

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**